

Armenian Evangelical Church
of New York

Monthly Bulletin

The Rev. Haig Kherlopian, Pastor



ԱՄՍԱԹԵՐԹԻԿ

Նիւ Եորքի

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ

Վեր. Հայկ Խրլորեան, Հովիւ

Volume 103

OCTOBER 2014

No. 2

The Monthly Bulletin

Published by

The Armenian Evangelical Church of New York

152 East 34th Street, New York, NY 10016

Telephone 212-685-3177 ☩ Fax 212-889-8338

E-mail: info@aecnyc.org

New Website: www.aecnyc.org

Founded in 1896, the AECNY, a Congregational Church affiliated with the United Church of Christ, is dedicated to serving the spiritual needs of the Armenian-American community, friends and neighbors in the metropolitan New York City area and around the world.

We aim to provide a variety of ministries in Christian education, music, outreach and fellowship.

All articles submitted for publication are subject to acceptance, rejection and editing by the Publication Committee with no obligations to return the unpublished articles to their authors.

<p>The Monthly Bulletin of the Armenian Evangelical Church of New York Published monthly, except in July and August, by the Armenian Evangelical Church of New York, 152 East 34th Street, New York, NY 10016 Yearly subscription: \$15.00 Postmaster: Send address changes to <i>The Monthly Bulletin of the Armenian Evangelical Church of New York</i>, 152 East 34th Street, New York, NY 10016</p>

On the Absolute Trustworthiness of God

One of God's most marvelous gifts to us is His trustworthiness. He is our strong tower (Proverbs 18:10), our secure refuge, our savior, and the one who invites us to cast all our cares and anxieties on Him (1 Peter 5:7).

What does it mean that God is trustworthy? The way I understand it, God deserves our trust because of the combination of His truth and His love. Whatever it may mean in the abstract, the statement in John 8:26 that "the one who sent [Jesus] is true" points to the fact that God is reliable. There is an ideological, if not etymological, link between truth and trust. What is true merits trust, and God is true. We ought to be confident that He will fulfill His promises. As is written in Numbers 23:19, "God is not human, that he should lie, not a human being, that he should change his mind. Does he speak and then not act? Does he promise and not fulfill?"

We are able to know the love that God has for us through Jesus' life and through the presence of the Holy Spirit, and then to respond to God's love by lov-

ing God (1 John 4). There is something natural about trusting the one you love. Christians who experience an intimate closeness with God are most blessed in being able to relax in God's love. That is, actively trusting God is itself pleasurable. Suffering anxiety, by contrast, is not enjoyable. Fretful Christians who rely on themselves in times of trouble, rather than expect deliverance from God, miss out on one of the best aspects of belonging to God. Do not waste the ability to trust in the Lord!

As a thought experiment, we might consider the principle from Luke 16:10 that the believer who is faithful in little matters will also be faithful in much, with respect to God: the Lord our God who is faithful in the biggest things will also be faithful in the small. The God to whom we entrust our eternal futures is deserving of our trust in minute things. We may say or think that we hope in God for our ultimate salvation. Meanwhile, we doubt God's goodness in the circumstances of our everyday lives. Is this logically feasible? Does the fact that we worry about earthly matters—which are small things, relative to our standing with God—believe a lack of trust in God for our salvation? Is it possible to trust that we will spend an eternity with

God in heaven but doubt that God's sovereign hand rests over the details of our day-to-day lives?

Many of the wishes of our hearts that we long for God to fulfill—a loved one's salvation, security in times of transitions, solace in grief, a repaired relationship, a restored son—are patently outside of our control. They are beyond the power of our "doing," let alone the power of our understanding, and so we are forced to turn to an external source for help. In wanting to become people of trust, people who look upward and find help that comes from the maker of heaven and earth (Psalm 121:2), let us emulate King Hezekiah, who "held fast to the LORD and did not stop following him" (2 Kings 18:6a) and King Jesus, who faithfully followed the Father's will all the way to the cross and committed His spirit into the Father's hands (Luke 23:46). God's trustworthiness extends through every level.

Take comfort in this promise: "The LORD is good, a stronghold in the day of trouble; and he knoweth them that trust in him" (Nahum 1:7, KJV).

-Heather C. Ohaneson

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԷՆՔԸ

Ամեն երկիր իր քաղաքային օրէնքներն ունի: Ընկերային կարգն ու կազմը օրէնքով կը պահպանուի: Մարդկային խմբակցութեանց (կրուփ) գործունէութիւնները կը կազմակերպուին եւ կը ներդաշնակաւորուին օրէնքներու ուժովը: Օրէնքը անէծք մը չէ՝ ընդհակառակն, օրհնութիւն մըն է: Օրէնքը մարդկային ազատութիւնները չի խափաներ, այլ կը պահպանէ զանոնք: Արդար մարդը օրէնքին մէջ կը գտնէ իր անհատական ազատութեանց երաշխիքը: Օրէնքը իբրեւ սպառնալից սեւ ուրուական մը կը հալածէ միայն զանոնք որոնք ուրիշներու ազատութեան դէմ կը դաւադրեն դռեհիկ եւ մեղապարտ անձնասիրութեամբ մը:

Օրէնքը, սակայն, ինքնին դրական ուժ մը չէ՝ Ժխտական ուժ մըն է: Օրէնքը կրնայ զսպել ոճրագործին ոճրագործական հակումներն ու բնագղները, բայց զանոնք չի մեռցնէր, արմատապէս չի փոխէր: Օրէնքը կ'արգիլէ, չի դարմանէր: Օրէնքով ոչ անհատին եւ ոչ ալ ընկերութեան նկարագիրը կրնայ երբեք

բարեփոխուիլ, բարեկարգուիլ: Օրէնքը ստեղծագործիչ (նէնրբէյթիվ), բարոյացուցիչ ուժ մը չէ: Բարոյականութիւն մը որ, օրէնքի միջոցաւ, արուեստականապէս անհատին կամ ընկերութեան վրայ կը պարտադրուի, բարոյականութիւն չէ: Օրէնքը կրնայ միայն ներքին անբարոյականութիւն մը քողարկել արտաքին խտրեպատիր (illusory) բարոյականութիւնով մը: Երեւութական բարոյականութիւն մը, սակայն, աւելի զգուելի է քան յայտնի եւ համարձակ անբարոյականութիւն մը: Բարոյականութիւնը սրտին եւ ներքին շարժառիթներուն մէջ է, եւ օրէնքը ոչ սրտին եւ ոչ ալ շարժառիթներուն կրնայ հասնիլ, թափանցել:

Այն տեսակէտները որոնցմով Յիսուս եւ իրեն ժամանակակից Հրեաները կը դատէին, կը գնահատէին օրէնքի արժէքը ու նշանակութիւնը, իրարմէ արմատապէս տարբեր էին:

Հրեաները օրէնքը կը համարէին իբրեւ դրական, փրբկագործիչ ուժ մը: Օրէնքի հլու հպատակութեան մէջ կը տեսնէին մարդու մը առաքինութեան ապացոյցը: Մարդոց բարոյականութիւնը կը դատէին լոկ իրենց

արտաքին գործերովն, առանց երբեք նկատի առնելու անոնց ներքին, գաղտնի տրամադրութիւնները: Ըստ օրինաց արտաքին արժանաւորութիւն (respectability) ներքին անխարդախ բարոյականութեան համարժեք կը նկատէին: Վարմունքի օրինաւորութիւնը Հրեային համար բարձրագոյն առաքինութիւնն էր: Մարդ «սրտով մաքուր» ըլլար կամ ոչ, որչափ ատեն որ արտաքին վարմունքով եւ գործերով ամբասիր էր, բարոյապէս կատարեալ կը համարուէր: Յիսուս ինքզինքը գտաւ ընկերութեան մը մէջ որուն անդամները չարասիրտ էին, այլ չարագործ չէին: Օրէնքին զապիչ ազդեցութեանը տակ մարգոց ներքին չար տրամադրութիւնները գործնականապէս չէին արտայայտուէր արդարեւ, նոյն ատեն սակայն, այդ չար տրամադրութիւնները անփոփոխելիօրէն չար կը մնային անոնց հոգիներուն մէջ: Հրեաները, օրէնքին միջոցաւ, մեքենականօրէն չարերը բարի կ'ընէին, առանց անոնց չար տրամադրութիւնները փոխելու ջանք ընելու: Բարութեան, առաքինութեան, մէկ իօսքով, բարոյականութեան սահմանը ի՞նչ էր -

չընել ինչ որ օրէնքը կ'արգիլէր, եւ ընել ինչ որ օրէնքը կը պահանջէր:

Յիսուս օրէնքը չարհամարհեց, այլ Հրեաներուն օրէնքի հանդէպ բռնած դիրքը արհամարհեց: Յիսուսի համար բարոյականութիւնը ընելու կամ չընելու խնդիր մը չէր, ինչպէս էր Հրեաներուն համար, այլ ըլլալու խնդիր մըն էր: «Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիք»: Յիսուս դատապարտեց օրէնքով պարտադրեալ, ցուցադրեալ արտաքին բարոյականութիւնը, գոր իսկ եւ իսկ Ան բարոյականութիւն համարեց եւ ջատադովեց - սրտի, ներքին, անխարդախ բարոյականութիւնը: Տրամագծապէս հակառակելով Հրեական տեսակէտին, Յիսուս պնդեց թէ ճշմարիտ բարոյականութեան գաղտնիքը կը կայանար չէ թէ օրէնքի բռնադատեալ հպատակութեան մէջ, այլ օրէնքէ կատարեալ ազատութեան մէջ: Օրէնքին սեղմումները, ճնշումները կը չեզոքանան, անզգալի կ'ըլլան անոնց համար որոնք ներքնապէս, հոգեկան տրամադրութիւններով, ազնուացած եւ սրբացած են: Մարդ մը որ գողնալ չի կամենար, չի փափաքիր, գողնալու

դէմ դրուած ամէն օրէնքէ ազատ կ'ըլլայ: Օրինական արդելքը կամ զսպումը անոնք կը գոան որոնք արգիլեալ կերպով գործելու ներքին տրամադրութիւն ունին: Ըստ Յիսուսի նոր տեսակէտին, եւ հակառակ Հրեական տեսակէտին ճշմարիտ բարոյականութիւնը օրէնքի գիտակից հպատակութեան արդիւնքը չէ, այլ արդիւնքն է ներքին տրամարութեանց, որոնք կ'արտայայտուին այնպիսի վարմունքով մը որ, առանց ենթակային գիտակցութեանը, բնականօրէն, համաձայն է օրէնքի: Ճշմարտապէս առաքինի մարդն է այն՝ որուն կեանքը օրէնքի հպատակ չէ, այլ ոչ իսկ օրէնքի անհամաձայն է: Օրէնքէ ազատ ըլլալ օրէնքի դէմ ըմբոստանալ ըսել չէ: Իսկապէս ազատ մարդը չ'ըմբոստանար, կամ ըմբոստանալու ստիպողութիւն չի զգար:

Յիսուս օրէնքը չլուծեց, այլ լրացուց զայն: «Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն եւ զփարիսէցոց, ոչ մտանիցիք յարքայութիւն երկնից»: Այս էր ահա լրացեալ օրէնքին բանաձեւը: Մարդիկ կը փրկուին, կ'արդարանան, երբ ներքնապէս փոխուին: Ջարին սիրտը փոխէ որպէսզի չարիք դործելու

կամեցողութիւն չունենայ ինքնաբերաբար: Հրեաները աղտոտ ջուրը քամիչէ անցընելով կը դոհանային. Յիսուս ջուրին ակը մաքրել ուզեց որպէսզի քամիչի հարկ չմնայ: Յիսուսի դարմանը արմատական էր, Հրեաներունը՝ արուեստական:

Յիսուս իր դարմանը մատակարարեց սիրով մը՝ որուն մարմնացումն էր իր կեանքը: Հրեաներուն դարմանը անանձնական էր, անողոք, անզգայ, անհոգի օրէնք մը: Նոր օրէնքը կեանք մըն էր. հին օրէնքը տառ մըն էր:

-Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ

GIFTS ACKNOWLEDGED WITH GRATITUDE

*Thank
you*



FELLOWSHIP HOUR

If you would like to host a Fellowship Hour in honor or memory of someone, or for a special occasion, please contact our church office at 212-685-3177.

CHANCEL FLOWERS PRESENTED

September 7 - In loving memory for sister **Grace** on her birthday Sept. 8 and mother **Yevnige** on her birthday Sept. 24, by Anoush Haig.

September 14 - In loving memory of **Luther Dogramajian**, who in our hearts always, by Pearl, Raina, Steve, and Sage.

September 21 - In loving memory of wife and mother **Adrina Kayaian**, from husband Berg Kayaian and Elizabeth, Paul, and Robert.



Altar Flowers may be dedicated in honor or in memory of a loved one, for a holiday, birthday or graduation.

Please sign up for a Sunday of your choice by calling the church office at 212-685-3177.

UPCOMING EVENTS AND ANNOUNCEMENTS

Join us for:

Sunday Morning Worship - 11:00 AM

Bible Study - Tuesdays at 7:00 PM

October 5 Preacher: Peter Kougasian, Esq.

October 12 Guest Preach David Snyder

(World Vision Sunday)

October 19 *The Name of Jesus*

(Mark 1:1-11)

October 24 Friday Night Worship - 7:00 PM

October 26 *The Authority of Jesus*

(Mark 1:12-34)

October 26 Friends of Warm Hearth Benefit Concert

Pianist: Kariné Poghosyan - 2:00 PM

**Italics indicate Sermon Title*

“Jesus said to him, ‘I am the way, and the truth, and the life; no one comes to the Father but through Me.’”

(John 14:6)

